

րայ իրաց և կարգի դպրատան, թէ ո՞րպէս պահին : Հինգերորդ, 'ի վերայ հոգաբարձու աղաջային թէ զիսր զարի :

Այլ եթէ աղաջայք արասցեն ինչ այն պիսի, որ իցէ ընդէմ, կարասցէ դպրատանն բողոքել զոցանէ առ սենաթն, և սենաթն

պարտաւորեսցի պաշտպան լինել և վրէժիքն զիր : Այս թէ անփոյթ զացի սենաթն յայս և կամ յայլ պարտաւորեմիւնս իւր, լիցի բողոքումն առ էկերում փառսէն, և նոքա կացցեն ջատագով, և սենաթն մի կարասցէ անարգել զատագովութիւն նոցա :



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՑԱՐԵՒԵԼԱ

(Տես յ՛էջ 158)

ԽԱ

Կեօք-չայի բարձրաւանդակաց վրայ . — Դադար՝ թագա-քէնտ գիւղին մէջ . — Բանակեսող Ռատոքի Քրդերուն .

21 յուլիս . — Կէսօրոււան դէմ, երկինքը փոքր ինչ պարզելով, կարաւանը ճամբայ կ'ենէ՛ կէօք-չայը շրջապատող բարձրաւանդակներուն ուղղութեամբ : Երագաբար կ'արշաւենք դէպ ի բարձունքը, բայց օդը հետպհետ աւելի կ'աւրուի : Ձեան և կարկտի տարափի մը ներքեւ, և սոտնաշունչ հոփով կարկամած, կը հասնինք Քրդաց առաջին բանակները, որ ճիշճ Գեղարդի վրայ կը գրաննուէր : Հոն, խմբովին կը դիմենք վրաններէ միոյն մէջ, ուր պառաւ կին մը, որ նախ զմեց մաքսաւորներ կարծեց, մեծ հիւրընկարութեամբ կը պատուէ զիս, մինչդեռ կատաղի շներն կը սպառնան զմենք պատառել :

Օդաչափը 2300 մետր բարձրութիւն կը ցուցընէ, իսկ չերմաշափը՝ 11 տասնեւոր սարաւանդը թէնտպուլաք կը կոչուի, և հոն դուռը ող հովիներն, որ Փէջ յառաջ հասեր էին այնտեղ, կարծեն շատ կը նեղուէին օդոյն խառնակութիւններէն :

Քէնտպուլաքէ երեք քիլոմետր հեռու, գիշերը անցընելու համար կանգ կ'առանք թագա-քէնտ կամ Ապտուլահ-սար գիւղին մէջ, Գեղապատը՝ որ Գեղարդէն եկած էր կարաւանին հետ, մեզ առաջնորդութիւն պիտի ընէր կէօք-չայի շրջակայ լերանց մէջէն մինչև ի Նոր-Պայալիս : Յառաջուց երկու

շափար զրկեր էր, որպէս զի գիշերը անցընելու համար մեզ իջեվան մը պատրաստեն : Այս իջեվանը կը նամնէր փոքրիկ սայլատան մը, որուն միայն երկու կողմերն որմերով պատսպարուած էին, իսկ միւս երկու կողմերը գորգերով ծածկուած : Այս այս էր մեր բնակարանը նոյն գիշերուան համար, որ սակայն՝ իւր օդոյ հասնագովին հանդերձ՝ նախականների էր մեր հիմակոււան ամէն բանէ զուրկ վրանէն :

Այս գիւղը 2200 մետր բարձրութեան վրայ շինուած է, ուր հազիւ տասոներկու ընտանիք և մի քանի վրանարնակ քրդեր կը գտնուին : Այս բարձրութեան վրայ արմտիք լաւ կը բռննին :

Բարձրաւանդակին հարաւային ծայրէն կը տեսնուի հետուն յաղթահասակ Ապսիս լեռը և Երախայ հովիսը, իսկ անմիջակին վարը տարածուած է Գեղարդայ խորածորը և վանքը, որ կառուցուած է աւելի քան 300 մետր բարձրութեամբ սեպացեալ ժայռի մը ստորոտը : Թէ և տասն վայրկենին մէջ կարելի է իջնել հոն, բայց մենք ձիով երեք ժամուան մէջ հասանք, լիբան շրջանը կատարելով : Զուր տեղ կը ջանանք բնակարանէն քանի մի քայլ հեռանալ, ակնարկ մը տալու բնդկանուր տեսարանին, որ սարահարթի բարձրաւորեսցին վարձուած էր աղաջայքը առաջին բարձրութեան վրայի մէջ գույքը կը տարկ վրանէն :

Քէն կը տարածուի մեր աշաց առջև. սարսահելի կատաղութեամբ չները մօտէն կը շրջապատեն և կը սպառնան կտոր կտոր ը-ներ գեեզ:

Յուրտ օդն ինձ ախորդելի գիշեր մը չի խոս-
տանար: Մածկութով մը երկուքի բաժնե-
ցինք մեզի չնորհուած վրանին կէ միլոցը,
մի մասը Համբարձումին տալու համար:
Հովե անդագար ամէն կողմ կը տարուրե-
րէր մեր կտուէ ծածկոյթները: Եւ այս ցըր-
տութեան վրայ աւելցնելու է նաև լուրերուն
տանձանքը, որոնք երամովին ժողվեր էին
գործերուն մէջ:

Առաւոտեան ժամը երկութիւն, ջերմաշափը
Յ աստիճան միայն կը ցուցընէր: Մեր ըն-
կերն ևս շարժման մէջ էր. ծածկոյթն որ
զինքը արտաքուստ կը պաշտպանէր՝ մերթ
ընդ մերթ բացուելով սոյս հոսանքներ կը
ձևացնէր, ուսկից պատսպարուելու համար՝
ստիպուեցաւ հովանոցը բանալ, որ գիշերը
ճանապարհորդելով տիրոջ դիլէն մինչեւ ուս-
քերուն քով գացեր էր: Այս ամէնը շատ
կը զուրացնէր մզել:

22 յուշիս. — Վերջապէս կը տեսնուի ա-
րևը, զոր կ'ողջօնսեմ ուրախութեամբ. տա-
րածուելով գետնին վրայ՝ կը փութամ տաք-
նալ արեւուն ջերմ ճառագայթներով: Գէորգ,
կիսով չափ սառած (որովհետեւ բացօթեայ
քնացեր էր պատի մանկիւնը) դողդուալով
կը պատրաստ նախաճաշը, աթար վառելով,
որովհետեւ այս բարձրաւանդակներու վրայ
ամեննին փայտ չի գտնուիր:

Ժամը ութին, յետ առ մը յանդիմաններու
և ցնցիւու մեր մարդիկը, որոնք ամէնքն ալ
գիշերուան ցրտէն կարկամեր էին, ճամբայ
կ'եննենք հիսխային-արեւելան ուղղու-
թեամբ. իւչ-թէփէլէր բարձունքը ձա-
խակողմը թողլով, կարաւանը երկու ժամ
վերջը հասաւ նոր դալբարպուար սարա-
հարթի մը վրայ: Յուրտ հով մը կը փշէ
միշտ, և հեշտաեւ կը մարքէ մարդագետին-
ները՝ ուր գեա նոր հաւեր էին ձինները...

Ջերմաշափը 4 աստիճան կը ցուցընէ, և
շատ տիրութեամբ ծի կը հեծնեմ, սաստիկ
ցրտարունչ արևելան հովէն մարմինս սա-
ռած լինելով. ոսքերու անշարժ կը մեան
ասպանդակներուն մէջ: Որպիսի տարօրինակ
հակապատկեր այն ժամանակին, յօրում Եր-
րասայ հովտին մէջ երբեմ տաքութենէն
կը տուրքէին աննոր:

3440 մեր բարձրութեան վրայ նոր բա-
նակետը մը կը ներկայանայ մեր աշաց, որ
մեր ձագէն աւելի խեթէ և անսաստապար
էր: Հոն միայն քանի մի վրանարնակ
Պուրուափի Քրուեր և Արտաշատու հայ ըն-

տանիք մը կը գտնուէին: Բոլոր գետինը աղ-
բերով ծածկուած էր: Մեր վրանը անկէ քիչ
մը հետո հաստատեցինք փոքրիկ և խոնաւ
կանչութեան մը վրայ:

Նոյն միլոցին, օրը տարաժամէլով, կեն-
դանիներն հանգրուաններու մէջ կը մտնեն.
գումէշներ, ոչխարներ, ձիեր, ճայիիներ ան-
կարազրելի խառնակութեամբ կը վաղեն
ամէն կողմէ: Ձիերն հերարձակ, սանձար-
ձակ և առանց ոտնակապի, երագարար կը վա-
զեն կ'անցնին առանց մէկու, մը վահասելու,
որուն վրայ միշտ զարմացեր եմ: բայց գրեթէ
սարսափեր են անեւ, որովհետեւ իրենց յա-
խուռն ընթացքին ատեն՝ ուժերնին կը ըըռ-
նուի վրանի չուաններուն մէջ, զոր կարա-
ւանի մարդիկը դեռ շեն կրցած կանչնել: Նոյն
միլոցին մերձաւոր վրանի մը մէջ կ'ա-
պաստանիմ, ուր փայտերու կրակ մը բոցա-
վա կը ճարճատի: Կանայք և աղջկունք զիս
սիրով կ'ընդունին, և բռնի կօշկիներս կը
հանեն՝ ուժերու տաքըներու համար: Եթեոյ
կը սկսին կթել կովերը, մատակները և ոչ-
խանները, և ինձ կը հրամցըննեն աննոնց
թարմ կաթը: Զգիտեմ ինչպէս բացատրել
այն սիրալիք զուրգուրանքը, որով կը հոգա-
յին զիս այդ կանայք:

Մինչեւ այսպէս կը թօղուի որ խնամեն
զիս, կը մտածէի որ մեր ունեցած թաղիքը
բաւական պիտի ըրլան այն գիշեր՝ այնպիսի
խոնաւ գետնին վրայ քնանալու համար: Ուս-
տի, Համբարձուալին միջոցով բանակցութեան
կը մտնեմ նոյն վրանի աղքատ բնակչաց
հետ, իրենց մէկ հասիկ գորգը գնելու հա-
մար: Ուրախանց նոքա այս անակնկալ շա-
հուն վրայ, այնպիսի բարձր գին մը կը պահան-
ջնեն մեղմէ, որ ուսերս թօթիվելով կը հեռանամ
իրենցմէ: Բայց Քի մը հորդրածելէ վերջ,
կ'օրուեն զայն ծախել ինձ, իրեն արժէից
կրկին գնով, որ սակայն մեծ գին մը չէր,
որովհետեւ նոյն գիշերը իրենիկ պիտի սափ-
պուէին տղմին մէջ պառկել: Սակարիութիւնը
կտարաւուելին յետոյ սաստիկ ծեծել տուի այն
ստուար գորգը, բայց գտբաղդաբար բաւա-
կան շեղու այն՝ ճճներուն համար, որ հոն
կը զեռային, և որոնց տանձանքը պիտի կըր-
կնապատկէին մեր ցրտէն կրած նեղութիւնը:

ԽԲ

Աք-տաղ և իւր վանեկատի (obsidienne)
խաւերը. — Կեօք-յայր. — Ալրիձա
բանակետղեն. — Ալբանէլու (մկանց երկիր).
— Մեր հասնելին ի կեօք-քենտ:

23 յուկս. — Ինչպէս կանեսաւ գուշակեր

էի, այս գիշեր չարագոյն եղաւ քան միւս գիշերները, և ստիպուցանք սաստիկ յօդացաւոթիւն մ'առնուլ մեր մնացած օրերուն համար: Բայց սատի, ձիերն որ մեզ շատ մօտ կապուեր էին, անդադար կը խըրխնձէին, իրարու կը զարնուէին և կը շարժէին մեր կտաւեայ խեղճ տունը: Բայց արևուն հետ մարգս նոր կեանք կը ստանսյ. սատի անմիջապէս վեր ելայ, որպէս զի դրացիներս յանձնարդոյն իրենց պառատեան աշխատութեանց մէջ գտնեմ:

Յիշաւի քուրդ կանայք սաստիկ գործունեայ են: Քանի մը հոգի կարագ կը զարնէին մասնաւոր մասօթի մը մէջ, - մէջտեղէն ծակուած տիկ մը, - որուն մէջ սեր կը լեցընեն և յետոյ կը կախեն երկու ցիցերու կապուած չուանի մը վրայէն. կին մը առջևէն դէպէ եռև կը շարժէ այն նորորին ակ ծփոցը, մինչեւ որ կարագ չընուի: Այս կերպով զատրաստուած կարագը ձեան պէս սպիտակ է, որը կը պահէն ջրալից տիկի մը մէջ:

Այս սարաշարթէս աշքը կը դրաւէ Աքտաղի (Սպիտակ լեռ) սալնարանները: Օդը կը սկսի գեղեցկանալ, և մամբ ութին կը չեռանանք այս բանակետուն, որուն բնակիները թէպէտ և հրեամմեծարք բայց աղքատ և զզուեցնելու չափ աղտուի մարդկի էին:

Հարի է արդ գեուարութեամբ վար իննել քարակոյստերու վրայէն, որովք ձեւացած էին Աքտաղի վանակատի կամ որսիդի բեկորներով, և որուն հիսախսային — արևելեան կողմէն պիտի անցնէինք: 33(0) մետր բարձրութեան վրայ. Ճիերը ձեռն վրայէ կը քաշին, որ դռա աստ և անդ ծածկոր է գետինը: Բայց գետնին այն մասերն ուր ձիւնը հայած է, կը տեսնուին մկանց ծակեր, ուրնք խմբովին կը պտշտին և ձիերու սըմբակներու. տակ կը ճգմուին: Ենոյնչս բազմաթիւ ծիծեռնակներ կը բնակին այս բարձր տեղուց մէջ (9 սատիճան):

Յետ պայուս մ'նելու Աքտաղի ստորուը և միանգամայն իր հրարիխային բաժակներու և արևուն մէջ վայրող որսիդի մեծամեծ կոյստուն շորջը, կ'եննենք 32(0) բարձրութեան վրայ, բուրաուլ - թէփէի ստորոտը գտնուուղ քարերէ շրջապատուած փոքրիկ լիք մը մօտ:

Գետինը ծածկող ցած խոտերու մէջ, մի և նյոյ ծածկափթիթ բուսականութիւննը կը գտնենք, ինչ որ տեսանք ի վիրուէու: Ուրշափ վեր կ'եննենք, այնքան մասախուզը կը թանձրանայ, և այն սատիճան ցուրու կ'ընէ, որ կը հարկադրուիմ վար իննել ձիւս, սրունքներուս թմրութիւնը անցնելու համար:

Յանկարծ մառախոսլի պատառուածքի մը մէջ, մեր ստորոտը կը տեսնուի կապուատակ մեծ բիթ մը. Կ'օք-չայ լիմն է: Բայց հազիւ ժամանակ կ'ունենակը դիտելու այդ հիանալի տեսարանը. վասն զի անձրես մեծ կաթիլներ և մթազոյն երկինք մը կը ստիպեն զմեզ անապարել՝ հասնել քուրդ բանակետող մը, որ մեր այն օրուան արշաւանաց վախճանը պիտի ըլլար:

Զափարները սրբնթաց կը վազեն նոյն ուղղութեամբ, մեղի ապաստանարանն մը պատրաստելու համար: Փամը տասնուումէկին կը հասնենակ հոն թթած և ընդարձացած մարմար:

Այս բանակետողը, որ Այլրիմ կը կոչուի, 2810 մետր բարձրութեան վրայ կառուցուած է, որը կը բնակին երեւան գաւառին Պուրութի քրդերը:

Այլրիմէն մինչև Սըշանը (մկանց երկիր, 2630 մետր բարձրութեամբ) մեծ հեռաւորութիւն մը չիայ: Այս վերջին գիւղին մէջ Պուրութի քրդերը կը բնակին, որ հինգ տարիէ ի վեր այն տեղ կը կենան հաստատուն կերպով: Ժամանակ մը իգիր կը բնակէին, բայց կարգէ դուրս աղքատ պէտքով լեռնակերու երկիր մը խնարդեցին, ուր անէկ վեր պիտի հաստատուսէին, և փոխանակ հզուութեան՝ երկրագործութեան պիտի պարապէին: Սըշանը իրենց շնորհուեցաւ: Այս բարձրաւանգակաց վրայ ձմեռը երկար կը տեսէ, և մինչև 1 ½ մետր բարձրութեամբ ձիւն կը տեղայ հոն: Եսոյն միջոց, բնակիչները թաղաւած կը մասն իրենց անշաղախ պատով շնորհած տնակներուն մէջ, և տաքնայու ուրիշ միջոց չունին՝ բայց եթէ ափուախն ջերմութիւնը: Մարգիկ կ'երգեն և շատ խոսութիւն կ'ընեն, մինչդեռ կանայք գորգեր կը հետևեն կամ բուրդ կը մանեն:

Թողով այս խեղճ մկանց սարահարրը, կարաւանը կ'ուղղուի գէպ ի կէօլ - քէնա գիւղը՝ կ'օք - չայի եղերը շնուրած, և կը հանինք հոն երեխյան ժամը երեքին, յետ անցնելու թազա - քէնա գիւղին առաջէն, ուր կու զան կէօլ - քէնա բնակիչները, ամառուան տօթակիզ օրերը անցնելու համար (2310 մետր):

Կէօլ հայոց գիւղը (2100 մետր բարձր) էճէն 1500 մետր հեռու կը գտնուի, ասկից բաժնուած է նահիճներով: Մժեղներն հոս բազմաթիւ են: Մէր վրանները բարձր տեղ մը կը հաստատէնք նոր հնձնուած ցորենի արտերու մէջ, և վրանը կը նախազանք քան աղտուի բնակարանը, ողոր գեղապէտը կ'ուղէր աալ մեղ գիւղին մէջ:

Կէօլի մէջ աթարն է միայն վառելի նիւթը: Այս գիւղին հայ բնակիչները, գրեթէ հա-


բիւր ընտանիքէ բազկացած, հարիւր յիսուն տարիէ ի վեր հոն հաստառուած են, և Պայագիտի մօտ՝ Ալաշկերտ աւանէն զաղթած են: Հետեարար անոնք ուրիշ բան չեն ըրած, բայց եթէ կրկին տիրապետուել նոր երկրին, որովհետեւ հսուց ի վեր անհկայ Հայոց կը վերաբերէ:

Ջուղայի շիրմաց նման բազմաթիւ գերեզմաններու աւերակներ կը վկայեն, թէ երեքն բարդաւած վիճակ մ՞ունեցեր է այդ գիշոյն: Այն աւերակաց վրայ կու գան աղօթելու ներկայ բնակիչքն, և բոլոր Հայաստանի մէջ տարածուած հին սովորութեան հսմեմատ հոն փոքրիկ կանթեղներու մէջ նաւթ կը վառեն, և զգեստաններու կտորներ կը ձգեն: Ա-

երակ մատրան մը մէջ, որ հոս Մաղկանց մատուց կը կոչուի, որմերու և սալյայտակաց վրայ նոր թափուած արեան արատներ կը տեսնուին: Այս բանիս մասին կը պատմեն մեզ, թէ ամէն մարդ որ կու գայ հոս ազօթելու առ Աստուած և թժկութիւն խընդրելու համար, հարկ է որ գառեակ մը կամ գառնուկ մը մորթէ մատրան մէջ:

Կէօթքնտի բնակիչները մշակութեան և ձկնորսութեան կը պարապին: Այս միջոցիս, կէօթչայի մէջ միայն տեսակ մը պերկէ ձուկ կը գտնուի:

Իինը շրջապատող ճահճներուն այս մասը մի է բազմաթիւ թոշուններով:
(Շարայարելի)



ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ԱՆԱՆԻԱՆ ՇԻՐԱԿԱՑԻՆ

ԵՒ

ԱՐԱՐԱՏ ԹԵՐԹԻՆ ՄԷԿ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ



Ե՞ր գրականական պատմութեան մէջ, Անանիան Շիրակացին իրեն յատուկ և բաւական պատուարեր դիրք ունի զրաւեր է իւր մասնագիտութեամբ. այս է՝ պրապարախական և մանաւանդ թուաբանական հմտութեամբք, որուն համար ես՝ Համարող կոչումը ժառանգեր է իրեն: Սա ընդհանրապէս ի բանափաց յատիւ եօթներորդ դարու հեղինակ կը համարուի, և կամ «ի սկզբան է դարու, - ինչպէս կ'ընէ Փ. Պատկանեան» Շիրակացոյ զրութեանց կրաստակութեան նախարանին մէջ, - յաւուր Մօրկայ և Արքուէջ Խոսրովու: » Անակայն ինձ շատ հաւանական չի թուր այդ, որովհետու Անանիայի իւր անձին կամ կենացը վրայ տաւած ուրիշ տեղեկութեանց հետ չի համաձայնիք. Հետեարար Փոկասէն վերջը և Հերակլեանց հարստութեան միջոց պէտք է դնել նորա գրականական կեանքը (610-641): Վերոյիշեալ կրաստակութեան սկիզբը զրուած է զլուխ մի,

« Անանիայի Շիրակվանցոյ երիցս երանեալ վարդագետին վասն որպիսութեան կենացն»: արդ այս զիլոյս մէջ՝ Շիրակացին իւր վարդապետին բերանը կը գնէ (էջ 2-3), թէ « Ես ի Տրապիզոն քատարի մանկութեամբ կացեալ ի գուռն Յովհաննու զօրավարին զինուորեալ ի Հայոս, և արզում ժամանակս կացեալ մինչեւ ի Մօրիկ թագաւորն և ուսայ լիզու և դպրութիւն»: Արդ, այդ Յովհաննէս զօրավարն պէտք է լինի Միհանակոն (Մստական) Կոյուածն, որ՝ ըստ վկայութեան թէ ոփիրակատոսի՝ Մօրիկ կայսեր առաջին տարին (582ին) կը թողու Հայոց զօրավարութիւնը, և կ'երթայ «ի լինել իշխան զօրացն արևելեայց Հառվմայեցոց¹»: Ես ահա այդ ժամանակները (580-582), Տիեքիկոս - Շիրակացոյն գարդապետն - դեռ ամանուկ:

1. Theophylactus Simocatta, (Corpus Scriptorum historie Byzantinæ), Bonnæ, 1837. p. 49.